

Վերջ՝ Սեւ Դաւիթն եմ, շատ դատեցայ,
 զըլուին անուամ ծաղկըներուն.
 Սակաւ ծաղկուեցն ես եմ գովել,
 բազում մընայ վարպետներուն.
 Երկիրըս Արզըրում կ'ասեն,
 Սալաձոր դեղս իմ օթեւան...:

Չեռագիր՝ Վենետիկ, Մխիթ. Մատեն.⁶:
 Ասկէ օրինակութիւն մը առ Նորայր Բիւզան-
 դացոյ:

Հրատարակուած՝ 1. Մեղու Հայաստանի,
 1858, էջ 21—23: — 2. Սրբանձտեանց՝
 Արեւելեան Մամուլ, 1884, էջ 137—139,
 177—179⁷: — 3. Սրբանձտեանց՝ Համով
 հոտով, էջ 278—285⁷: — 4. Կոստանեանց՝
 Նոր Ժողովածու, Բ., էջ 66—75: — 5. Նո-
 րայր Բիւզանդացի, Բանասէր, 1901, էջ 87—
 129 (էջ 89—97 բնագիր, էջ 97—129 մեկ-
 նութիւն ծաղկըներու անուններու):

ԴԱԽԻԹ ՍԱԼԱԶՈՐԵՅԻՈՅ ՈՂԲ Ի ՄԱՀՆ ԴՍՏԵՐ
 ԻՒՐՈՅ

Տաղս այս համեղագոյն է ի յերերումն
 Դաւիթ վարդապետի է, գեղջիւ Սալաձորցի:

Փառք քեզ թաղաւոր փառաց,
 քեզ փառք տան յաշխարհս ամենայն.
 Ես եմ մեղաւոր անդարձ,
 փառք չասի ես օր մ'ի մեղաց:

5 Ես խիստ չար հպարտ էի,
 որ չափ չըկար իմ հպարտութեանս,
 Ոչ հացըմ աղքատի տփի,
 ոչ զնացի ի Ժամատեղի:

10 Ես խիստ բարձրամիտ էի,
 նայ ումեկ զըրի Նոանայն,
 Այնոր բարկացաւ Տէր ինձ,
 ու ձեռացս առաւ իմ տըղան:

Գոչեմ հառաչեմ լալով,
 պաղատիմ փառք քեզ տիրական.

15 Սիրով քաղցրացիր նորա,
 մի ձրգեր զիս ոտից կոխան:

Ա՛յ իմ Նոանայ դատրիկ,
 Նոանայ սուրաթդ աննման.

20 Աւա՛ղ քո կանանչ արեւդ,
 որ մըտաւ ի հողն ի զընտան:

ԽՈՐԱԳԻՐ՝ Համեղագոյն է ի երերումն:

6 ո չափ չըբար: — 7 անբար: — 8 Ժամայ
 տեղի: — 15 նորայ: — 16 մի մի ձրգեր: 19 աւախ քոյ:

⁶ Կը սկսի 17րորդ տողէն՝ «Անբարտեղի սրբելիք
 են...»:

⁷ Կը սկսի 18րորդ տողէն՝ «Հուր որոտաց, քո-
 մին հնչեաց...»:

Վախեմ, իմ մեղաց մեռար, Նոանայ,
 կամ սըրբուեաքն ինձ բարկացան:
 Ուր էր, Աստուծով լինէր,
 քեզ դասէր ի յաջակողման:
 Բեզ անձառն ճար արի 25
 մէկ ու ճար դուստր իմ Նոանայ.

Դու զիս բընաւերք արիւր,
 զինչ պայգուչքն աւերքըն կենան:
 Թէ ի տանէն դուրս յէլնեմ, Նոանայ,
 դուսըն լոյս, աչերս է մըթան. 30

Սեւ լաթ դօլլանտով սըրբեմ,
 արաստուեքս առեր, լոյս չըկայ:
 Դառնամ դուռն ի ներս մտնում, Նոանայ,
 տունըն սուգ առեր կու տըբայ. 35

Մարդըկին չիվան առեր,
 դերընին ամէն փոշիման:
 Գնացեր տանըս շնորհքն, Նոանայ,
 թունա առեր, տունն է աւեր խան. 40

Աւելը ալ աւաղ կ'ասէ,
 թէ բերէք իմ նոր բուրաստան:
 Թէ յէլնեմ ի քունձդ էրգամ, Նոանայ,
 քունձդ խոր դերդ մութն ու զընտան. 45

Դառնամ եւ սընտուկդ հայիմ,
 դուռն փակ կողպանքն ի վրայ:
 Թէ յէլնեմ թախադ դնամ, Նոանայ,
 փոշոտել սարքն վար կու դայ. 50

Դառնամ ի ծալքն հայիմ,
 ծալքն ծալ, դալազն ի վրան:
 Թէ յէլնեմ մառանդ գնամ, Նոանայ,
 կարանիդ ամէն ի շուրջ կան, 55

Աւաղ եւ բորբոք կ'ասեն,
 քունձ պուճախն ինձի կու տան:
 Թէ յէլնեմ ի գոմն զընամ, Նոանայ,
 անասունքն ամէն ի սուգ կան. 60

Կովերն ալ կըթող կուզեն,
 թէ բերէք մեր նոր թուրվանդան:
 Թէ յէլնեմ ի դուրս էրգամ, Նոանայ,
 նայ քարերն ինձի վայ կու տան. 65

Կ'ասեն. Ծօ անդութ ծընող,
 դու կարօտ թողիւր քո տըղան:
 Թէ յէլնեմ յաղբիւրն գնամ, Նոանայ,
 ջուրն գնացքն առնէ մանկման. 70

Կանգնի ու վըտակ զընէ,
 թէ ե՞րբ դայ իմ խասխորան:
 Թէ յէլնեմ հանդաստան գնամ, Նոանայ,
 բոյս առեր գեանէն վեր կու գան. 75

25 անձարն: — 32 չըբայ: — 37 շնորքն: —
 38 տունէ: — 39 աւախ: — 40 բէրէք: — 41 էրգամ: —
 44 կողպանքն: — 46 դու դայ: — 51 աւախ: — 54 ի
 սուգ: — 55 կովերն ալ կըթող դուզեն: — 56 բէրէք:
 — 57 էրգամ: — 59 անդութ ծնող: — 60 քոյ: —
 61 յաղբիւրն: — 63 կանքն: — 66 բուս... դու գան:

Բոյսեր սեւ հողին միջին,
 գոյնըգոյն ծաղկուեքն կու ցընձան:
 Արտասունքս ծով էր, Նոանայ,
 տատանիմ զինչ նաւն ի ծովայն. 70
 Ես եմ զարդ էղեր ի մէջ,
 որպէս նաւ յարեաց երերման:
 Քակիկի ճրովընոյս ոլորն, Նոանայ,
 շարժ ընկել զօղվածս թնդընդման. 75

Հառաչանք ի սըրտիս միջին,
 զինչ ծովու ալիք կու հեծան:
 Բաղկուեքս անցօր դարձեր, Նոանայ,
 եւ մատուեքս ամէն կու դողան:
 Քաղուել է գոյն երեսիս,
 սիրտս ճրմըլալ, աչերքս կու լան: 80

Թէ յէլնեմ ձորերն էրգամ, Նոանայ,
 յորդահոս ջըրեր կու բըխան,
 Վայրիքնին երամ կապեր,
 արեքնուն տակն կու կենան: 85

Ամէն կենդանիքս որ կան,
 տեսանեմ ձագով շուրջ կու գան,
 իմ ձագն արծրվին տըլի,
 ես աւեր բունըն կու կենամ: 90

Ես եմ քո տեսուտ կարօտ,
 մէկ ու ճար դուստր իմ սիրական:
 Վիւննա, Մխիթ. Մատ., Թ. 156, թղ.
 54բ—56բ: 2. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ՅՈՒՅԸՎ ՀԱՅԵՐԷՆ ՉԵՌԵԳՐԵՅ
ՀԱՄԱԼՍԵՐԵՆԻ ՄԱՏԵՆԱԳՐԵՆԻՆ Ի ԼՂՈՂ
 (Uniwersytet Jana Kazimiesza)
 ԿԱԶՄԵՅ Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Լվովի Հայոց Արքեպիսկոպոսարանը 1932,
 յունիսին, կազմակերպած էր իւր սրահնե-
 րուն մէջ հայկական Յուցահանգէս մը, ուր
 ի տես դրուած էին բազմազան առարկաներ,
 որոնք կը հայէին Լեհահայոց գաղթականու-
 թեան պատմութեան:

Այս առթիւ այցելած էի Լվով: Գլխաւոր
 նպատակս էր ուսումնասիրել քաղաքիս մէջ
 պահուած հայերէն ձեռագիրները: Աշխա-

67 բուսեր: — 68 դու նըրպուն: — 71 ի մէջը:
 75 հառաչան: — 76 յալիք: — 80 ճմեալ... դու լան:
 — 81 էրգամ:

տութիւնս դիւրացաւ այնու, որ Յուցահան-
 գիտի սրահներու մէջ մեծ խնամքով հաւա-
 քուած եւ ի տես դրուած գտայ բազմաթիւ
 ձեռագիրներ, հանուած մասամբ Արքեպիսկո-
 պոսարանի եւ մասամբ քաղաքի Հին Համալ-
 սարանի Մատենադարաններէն եւ այլ Թան-
 դարաններէ: Կային հոն նաեւ ձեռագիրներ,
 որոնք բերուած էին Ստանիսլաւովի Հայոց
 Առաջնորդարանէն:

Աւարտելով այս ցուցադրուած ձեռագիր-
 ներու ցուցակագրութիւնը, անցայ Համալ-
 սարանի Մատենադարանը, ուր գտայ նոր
 թիւ մ'ալ ձեռագիրներու: Ժամանակս չներեց
 խուզարկութիւններ կատարել Քաղաքին այլ
 Հիմնարկութիւններու մէջ: Նոյնպէս չյաջո-
 ղեցաւ ինձ այցելել Ստանիսլաւով, Հոռոզնե-
 կա, Քութի, Սնեաթին եւ այլ քաղաքներ,
 ուր ապրած են եւ կ'ապրին հայ գաղթակա-
 նական զանգուածներ: Յուսարեւր երեւան
 բերել այս Հիմնարկութիւններու եւ քաղաք-
 ներու մէջ ալ դրուոր մնացորդներ Լեհա-
 հայոց անցեալէն:

Հին է Լեհահայոց գաղթականութիւնը:
 Սկսեալ ժ.Գ. դարէն հասան Լեհաստան, այլ
 եւ այլ խումբերով, գաղթականներ, մասամբ
 Ղրիմի վրայէն եւ մասամբ Արեւելքէն, որոնք
 զետեղուեցան զանազան քաղաքներ. եւ ըստ
 բերման պարագայից տեղափոխեցին իրենց
 կայանը քաղաքէ քաղաք, նաեւ երկրէ երկիր:
 Հո՞ թուով գաղթականներ հաստատուեցան
 Կամենից եւ Լվով: Վերջին քաղաքս, սկսեալ
 ժ.Գ. դարէն եղաւ արքեպիսկոպոսանիստ. եւ
 ասկէ կը կառավարուէին Լեհաստան եւ Ռու-
 մանիա գանուող գաղթականութիւնները:

Լեհահայ գաղթականութեան ամէնէն
 պայծառ շրջանը կը ներկայանայ ժ.Գ. դարու
 առաջին քառորդին ի Լվով: Ունէր քաղաքս
 իւր Արքեպիսկոպոսարանը, Դատարանն եւ
 Դպրոցը: Արեւելքէն հոն հասնող նոր գաղ-
 թականներ ծաղկեցուցին դըրութեան արու-
 ետք եւ կատարեցին մեծ թուով օրինակու-
 թիւներ, թէ իրենց պիտոյքին եւ թէ ար-
 տածութեան համար: Բացուեցաւ ի Լվով
 նաեւ Տպարան (1617): Ունէր Առաջնորդա-
 րանը իւր ճոխ Գրադարանը:

Չանքերը կրնային լաւ արդիւնք տալ
 Գաղթականութեան համար, եթէ ժ.Գ. դարու
 երկրորդ քառորդին չյուզուէր Լեհահայ Գաղ-
 թականութիւնը յանկարծայարոյց փոթորիկէ
 մը, Նիկողայոս Թորոսովիչ արքեպիսկոպոսի
 օրով:

Միմէն Լեհացի, որ իբր 1625ին տուած է քաղաքին հայ Գաղթականութեան վրայ ամբողջ ակնարկ մը, կը յիշէ թէ Արքեպիսկոպոսարանը այլ եւ այլ Հիմնարկութեանց կից ունէր իւր Գրադարանը, ուր կը պահուէին, ի մէջ այլոց, «արծաթագոծ մազազաթ աւետարանք» (Ուղեգր., 336, 338): Ուրիշ տեղ (Կամենից, էջ 214) խօսելով Նիկողայոս արքեպիսկոպոսի մասին, կը գրէ թէ անկա ցրուեց, ոչնչացուց այդ Գրատունը:

«Յետոյ գամէն գրեանս ժողովեաց, Որ ի Գրատան էին պահած, Աւետարանք ոսկով գրած, Արծաթապատ կողով կազմած, Անգիւտ գրեանքն որ ի Լով կային, Սրսայ խազնիցն ելեալ էին. Ազնի գրքեր, շարակնցնի, Յրուեաց կորոյս գամենեսին»:

Եւ դարձեալ 1636ին գրած Յիշատակաւանի մը մէջ (Ուղեւ. 412). «Թող գարծաթապատ, ոսկիակազմ, մագաղաթ, ոսկեգիր բազում Աւետարանս եւ յոյով Շարակնոցս, ոսկով եւ լազվարդով նկարեալ պատուական պատկերս եւ Բ, Գձ ազնի գրեանս վարդապետական ի քաղաքական խազնայէ ի դարս ելած, մանաւանդ Սրսու եւ Քափայու. Բ, Գ Ատուածաշունչ, այլ եւ Մեկնիչք եւ Քաղուածք, Փիլոնգիրք եւ Քարոզգրքեր, Տօնականք, Սարգրագիրք, Սաղմոսի մեկնիչք եւ Արարածոց մեկնիչք եւ այլ անքիւ ազնի գրեանք, նաեւ յոյով Արտաքին գիրք, զորս ոչ կարեմ մի ըստ միջէ գրել, զի ձանձրացին լսողքն: Եւ զայն ամենայն վերոյգրեալ Մտրայ խազնիսն ի միում ամի կորոյս եւ ոչնչացոյց, նաեւ զգրեանս ամենայն ընդ նոսին. զորս ծախէր եւ վաճառէր, զկէսս գրաւէր Հրէից եւ այլ եւ այլ ցեղից, զայլս հալէր եւ ի պէտս մարմնաւոր մտխէր եւ զորս փոխէր ընդ ոչինչ իրս անպիտան եւ մարմնաւոր. տայր զոսկին եւ առնոյր զհողն եւ զմութիւր»:

Այս ձեռագրերն են ինչ ինչ կը յաջողի ապա կրկին ձեռք բերել: Այնպէս որ թ. դարու սկիզբը, երբ կ'այցելէր քաղաքս Հ. Միւնաս Բժշկեան, կը գտնէր հոն «գրատուն բազում գրչազիր եւ ապագրեալ մատենից Հայոց եւ այլոց ազգաց». «ուրանօր, կ'ըսէ, յանձնեցաւ մեզ ամօրեայ ժամանակու խուզել զգրչազիր մատենանս, յորս գտաք զերիս ան-

գրեա մատենանս, եւ ընկալաք ի պարզելի մասին ի յաւերժական յիշատակ ուխտիս սրբոյն Ղազարու ի Վենետիկ. ա. ձառք Փիլոնի իմաստասիրի գրեալ ի վերայ մազազաթի սակս Բ. Հեթմոյ թագաւորին Հայոց...: Բ. Հին թարգմանութիւն Գիտնեսիոսի Արիւպազացոյն ընտիր եւ անթերի: Գ. Մեկնութիւն Կաթողիկոսայց Սարգսի Շնորհաւոյն մեծազիր եւ ասխալ. թո'ղ զայլս» (ձանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ 1830, էջ 100):

Դեռ 1853ին կային այս Գրատան մէջ 74 թուով ձեռագրեր. որոնց ցուցակը կազմած է Sadok Barącz, O rękopismach kapituły ormiańskiej Lwowskiej, ի թերթին Dziennik literacki Lwów, 1853, Nr. 34, 35, 36, 37, 39 եւ 40 (հմտ. F. Macler, REA 7 (1927), 97, ծան. 1):

Այս ձեռագրերն են այժմ շատ չնչին թիւ մը միայն մնացած է Արքեպիսկոպոսարանի Մատենադարանին մէջ:

Կային նաեւ Լեհահայ գաղթականութեան այլ կայաններու մէջ մեծ թուով ձեռագրեր: Անոնցմէ մաս մը հասած է Վիեննա: Յանուանէ Չամոսցա քաղաքի Հայոց Եկեղեցւոյ ձեռագրերը, երբ ազգայիններու թիւը նուազելով քաղաքի մէջ, հարկ եղած է փակել Եկեղեցին կամ օտարացնել, Աւստրիական կառավարութիւնը մեծազոյն մասամբ փոխադրած է Վիեննա եւ զետեղած Արքունի Մատենադարանին մէջ. փոքր մաս մ'ալ, ինչպէս կ'երեւայ, յանձնած է Լվովի Համալսարանի Մատենադարանին:

Ես կը ներկայացնեմ հոս նախ Լվովի Հին Համալսարանի Մատենադարանին հայերէն ձեռագրաց Ցուցակը: Անոնք թուով 23 են եւ կը կազմեն Մատենադարանի ձեռագրաց 48—69 թուերը: Կայ հոն ձեռագիր մ'ալ 989 թուով, զոր ես չկրցայ տեսնել:

Երկրորդ տեղը կու տամ Արքեպիսկոպոսարանի Գրադարանի ձեռագրաց. զորոնք տեսայ ես Ցուցահանդիսի մէջ: Իմ մեկնելէս ետքը յայտնուած է նոյն Գրադարանի մէջ ուրիշ երկու ձեռագիր ալ, զորոնք ցուցակազրեց ինձ համար Հ. Վ. Մեյքիսեղեկեան:

Լվով այցելած էր ինձմէ յառաջ, նոյնպէս հայերէն ձեռագրերու ի խնդիր, Frédéric Macler, հայերէնի ուսուցիչը Պարիսի Արեւելեան Լեզուաց ձեմարանի մէջ: Իր տեսած հայերէն ձեռագրերն էր մասին ընդարձակ զեկուցում տուած է F. Macler: Rapport

sur une mission scientifique en Galicie et en Bukovine (Juillet-août 1935). Լոյս տեսած ի թերթին Revue des Etudes Arméniennes, VII (1927), 11—177, յատկապէս էջ 79—155: Macler տեղ տեղ շատ համառօտ կատարած է իւր ցուցակագրութիւնը: Կարեւոր համարեցայ իմ ցուցակագրութեանս առընթեր մասնանշել Maclerի ցուցակին իջաթուերը REA համառօտագրութեամբ:

1.

Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Ր Ա Ն

Cod. arm. 61. — ԺԷ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 230: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 13 X 9,2 հմ.: — ՆԻՒԹ՝ բուզր: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆ՝ լաւ. սկիզբէն եւ վերջէն քրքր ինկած. այս պակասը լրացնելու համար դատարկ քրքր գրուած: — ԿԻՍԱՆՈՐԱՆՆԵՐ՝ կան, նոյնպէս լուսացապարդի եւ ծաղկագրեր. պարզ: — ՆԿԱՐՆԵՐ՝ էջ 442, 453 (Ներսէս Շնորհալի), պարզ, անհաշակ: — ԽՈՐԱԳԻՐՔ ԵՎ ՍԿԶԲՆԱՏՈՂՔ՝ կարմրագիր: — ՏԵՂԻ ԵՎ ԳՐԻԶ՝ անծանօր: — ԺԱՄԱՆԱԿ՝ փե. դար:

Մատենան է Սաղմոսարան, պակասաւոր. ի կատարածին՝ Հաւատով խոստովանիմ, թերի: Յիշատակարան եւն չունի: Հմտ. Macler, REA 7 (1927), 130:

2.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Cod. arm. 48. — ՌԾԲ = 1603:

ԹՈՒՂԹՔ՝ 344: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 20 X 15,5 հմ.: — ՆԻՒԹ՝ բուզր: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԿԱԶՄ՝ փայտեայ բաշապատ: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՀԱՆԳԱՄԱՆ՝ լաւ. տեղ տեղ ցեցակեր: — ԽՈՐԱՆՆԵՐ՝ էջ 2—11 (Համարարատ), պարզ գոյներով: — ՆԿԱՐՔ՝ էջ 24, 188, 316, 522, չորս աւետարանիչք: — ԿԻՍԱՆՈՐԱՆՆԵՐ՝ էջ 25, 189, 317, 523, բազմագոյն, ոսկեխառն: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԳՐ ԵՎ ԾԱՂԿԱԳԻՐՔ՝ մեծ բուզր: — ՏԵՂԻ՝ Չամոսցա: — ԳՐԻԶ՝ Ղազար եպիսկոպոս: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1603:

Մատենան է Աւետարան լիակատար: Ունի նախադրութիւնները, ցանկերը, եւ ի վերջ իւրաքանչիւր Աւետարանին՝ Աւետարանի ճեղքում մասին տեղեկութիւններ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ՝ էջ 684. Փառք... Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուին ՌԾԲ. եւ հասաւ յանդ եւ ի յաւարտ մարտի Դ: Ձեռամբ ապիրատ եւ անարժանս ի մէջ եպիսկոպոսաց, անբանս եւ անիմաստս ի մէջ կար-

գաւորաց. եւ որպէս յիմար գոլով սկիզբն արարեալ հասա՛ ի յաւարտն եւ անճոռնիս մահաբախի Ղազարս յետնեալ յեպիսկոպոսաց, երկրան Եւզոկացի: Որդի Մանկուշ Սարգսի եւ մօրն իմոյ Ղութլու խաթունին. եւ հանգուցեալ արէան մերձաւորաց իմոց. ամէն:

Աղաչեմք ձեզ ո՛վ եղբայրք իմ կարգակիցք եւ պաշտօնակից որ անմեղազիր լինիք խոչորութեան եւ սղալանաց սորա. քանզի յոյժ վըշտանայի ի յօտարութեան վտարանդէ զի նեղէին զիս խորհուրդ(ք) իմ եւ յոյժ տարակուսի կայի, վասն այն զիբոս եւ ծաղիկս ոչ յարմարի. աղաչեմ զձեզ չմեղազրել. եւ արժանի աննել զիս զիծուն գրիչս եւ զճնօղս իմ յիշել ի տէր միով հայր մեղա՛խ. եւ դժք եւ ննջեցեալքն ձեր յիշեալ լիջիք առաջի Բրիտտոսի. ամէն:

Եւ ի ժամանակիս յայսմիկ որ էր հայրապետն եւ առաջնորդն տէր Մեղքիսէթ կաթողիկոսն. եւ ի թագաւորութեան քրիստոն(է)ից Զիկմունդին. եւ զանձլերին իւրո(յ) Յովսէփէս իշխանին. ի քաղաքիս յայս զանձլերին որ է Չամօսքի. ընդ հովանեաւ տիրամայր ամէնաւրհնեալ սրբոյնոյ Աստուածածնին: Եւ այլ բազում վկայից սրբոց որ մատուաւ եւ խորանաւ է զարգարեալ. եւ սրբասէր, քահանային սոցա որոյ է սպասաւոր սուրբ ուխտիցս տէր Յակոբ սրբասէր քահանային եւ իւր կենակցին Եաղութ քային՝ որ բազում աշխատութեամբ եւ երախտիք աշխատեցան ընդ անարժանութիւնս իմ, եթէ կերակրով եւ եթէ ըմպելեօք, Աստուած փոխարէնն յիւր արքայութիւնն տա՛. ամէն:

Եւ դարձեալ աղաչեմ զձեզ ով ունկազիրք սուրբ աւետարանիս յիշեալիք ի Բրիտտոս զստացողք սուրբ տառիս զՂայիսարցի բան Պունիաթն եւ զիւր ճնօղն զԱսլանն եւ մայրն Քեմիայն. եւ զիւր կողակիցն խաթուն Պիքան եւ հանգուցեալ եղբոր Պիքային զԱլէքէրին: Եւ (Ս)ոցի բան Սքանտարին եւ իւր ճնօղացն Պալէ եւ իւր մօրն Շնորհաւորին. եւ իւր կողակցին Փաշա խաթունին եւ ամենայն արեան մերձաւորաց սոցա որ ի Բրիտտոս հանգուցեալ կան. որ ստացան զսա ի հալալ վաստակոց իւրոց անջինջ յիշատակ իւրեանց հողոյն եւ իւրեանց ննջեցելոցն հողոյն, ի դուռն փոխման Տիրամօր Աստուածածնին: Ի մտի բերեալ զայն որ ասէ թէ Երանի այնոցիկ որ ունիցի գաւակ ի սուրբն Սիոն եւ ընդանեակ յԵրուսաղէմ: Աղաչեմք եւ խնդրեմք զձեզ հայրք սուրբ որ ստացողի սորա յետոյ յինանցն աւետա-

բանաց վերջն շարականաւ եւ մէկ փոխ աւեւ տարանաւ եւ Քրիստոս Որդիիւ եւ Հայր մեղայիւ յիշէք ի Քրիստոս. զիս զանարժան զբիւս զՂազարս եւ զստացողսն զբան Պուհրաթն: Եւ զպաճանախ սորա զՍցըսցի ըՍքանաէն յիշեսցիք ի Քրիստոս. ամէն: Եւ զթխտի կոկոզս զԵրզնկացի Փարաճն յիշեսցէք ի Տէր:

Ղազար Թորթեցոյ մասին տե՛ս Հ. Ն. Ակիւնան, Հինգ պանդուխտ տաղասացնէր. Վիեննա 1921, էջ 205—216:

Ձեռագրիս մասին խոսած է եւ Յիշատակարանս յոսաջ բերած Macler, REA 7 (1927), 148—152:

3.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Cod. arm. 64. — ՌՁԸ = 1639:

ԹՈՒՂԹՔ 337: — ՄԵՏՈՒԹԻՒՆՆ՝ 27 X 19,6 սմ.: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԳՐՁՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ԿԱԶՄ՝ կիսակաշի, լաքապատ: Ա. կողմն կեսը կտրած, ինկած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ երկու բուրբ, մասն լատին միասի: — ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝ էջ 1—5, 20—32, 37—39, 209, 319—321, 508—509, 662—674: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԽՈՐԱՆՆԵՐ՝ էջ 10—19, բազմագոյն, յաջող: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ էջ 41, 211, 323, 511: Նկարք չորս աւետարանչաց, էջ 40, 210, 322, 510: — ԼՈՒՍԱՆՅԱՉԱՐԿՔ, գարդազիբ բազմաթիւ: — ՏԵՂԻ՝ Լվով: — ԳՐԻԶ՝ Մկրտիչ դպիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1639:

Մատենան է Աւետարան չորս մասերով: ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. էջ 657—660. Փառք. Որ եւ մի ի բազմացն սրբ. Ղազարի որդին աստուածասէր Քրիզոր եղբայրն իմ հարազատ, մանաւանդ եւ աւագագոյնն քան զիս, ցանկացող եղև այսմ անպատում բարոյս այս սուրբ կտակիս, որ կոչի Աւետարան... վասն որոյ ստիպեալ եղէ յեղբորէ իմմէ եւ ես թերազարթ գոլով զբնութեան ի հարկէ յանձն առի զբել զսա. եւ շնորհին Աստուծոյ սկսա(յ) եւ ողորմութեամբ նորին յանդ ելեալ կատարեցի:

Արդ զբեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ յոգնամեղ Մկրտիչ զպրի ի թվաբերութեան Հոյկազան տուճարիս ՌՁԸ ամի. ի յերկիրս Իլախաց ի քաղաքս Իլչվ կոչեցեալ, ի գլուն սուրբ Աստուածածնին ննջման՝ եւ այլ սուրբ Եկեղեցեացս. ի ժամանակս հայրապետութեան սուրբ Էջմիածնա՝ տեսան տէր Փիլիպպոս կաթողիկոսին: Եւ թագաւորութեան Իլախաց չորրորդ Վլատիլլային: Բայց զառաջնորդ նահանգիս զպատամբեալն ի հայրապետէն ոչ համարեցայ արժանի յիշատակել աստ, ոչ եթէ ի բարիս՝ ա՛յլ եւ ի նախա-

տինս. քանզի բազում եւ անասելի նեղութիւնս հասոյց ժողովրդեանն Լէվա. զոր ոչ կամեցա յերկարել:

Արդ մեծաւ փառաբանօք զբել ես զսա եւ ստացող եղև սուրբ Աւետարանիս ի հալարեա(ն)ցն. եւ յարդար վաստակոց իւրոց եղբայրն իմ Գրիգոր. եւ ես զսա յիշատակ վասն հոգոյ իւրոց եւ վասն ծնողացն եւ ամենայն արեան մերձաւորացն իւրոց ի նորաչէն քաղաքն Չամոսչեա. յեկեղեցի աւմենասրբուհոյ Աստուածածնին: ... Արդ յիշես անկեալ ազաչեմ զձեզ... յիշեսցէք... նախ զստացող սորա զաւագ եղբայրն՝ իմ զպարսն Գրիգորն եւ զանպիտան Մկրտիչ զբիւս. եւ զծնողսն մեր զիսիսեցեալսն առ Քրիստոս՝ զհայրն մեր զպարսն Ղազարն եւ զմայրն մեր զկատարինէն. եւ զեղբայրսն մեր զբան Թորսն եւ զբան Նիկոլայոսն եւ զԱնդրէասն որ յերիտասարդական հասակին փոխեցաւ յաշխարհէս. եւ զբոյրն մեր զՇուշանն եւ զամենայն արեան մերձաւորսն մեր. եւ ասացէք զոնէ միայն զԱստուած ողորմի եւ Քրիստոս Աստուածն ամենեցուն, ամենայնի ողորմած ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցեալսցս ողորմեցի ի միւսանգամ զալստեան իւրոյ. ամէն:

2. էջ 661. Փակցուած կայ հետեւեալ յիշատակարանը.

Ընդ նմին յիշեցէք եղբարք իմ նազելի ի սուրբ եւ ի մաքուր յաղօթս ձեր զնիկով Լովցի պարսն Աւետիք Տօմաթիրաքեց որդին, զիմ հօրն եւ մօրն՝ զեղբայրն եւ զբոյրն իմ. եւ ասացէք Աստուած ողորմի նոցա հոգոցն: Որ յիշատակարան զրեցի սուրբ Աւետարանիս. ի ինդրոյ բան Գրիգորի Չամոսցացի զստացող սուրբ մատենիս: Ի քաղաքն Բեորդրբով. ուր Ազատ որդիքն զատաստանաւ զատին կէս ասարի. որպէս հոգեւորքն սոյնպէս եւ մարմնաւորք. ի թվ. Հայոց ՌՁԹ: մարտի ամսոյ 6. օրն Եչի: Աղուհացիցն երրորդ շաբաթին: Հոգոցն:

Ընդ նմին եւ զվարպետն իմ զտէր Դաւիթ Ձէթուցի յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր. եւ ասացէք Աստուած ողորմի հոգոցն. եւ ծնողացն նորին առ հասարակ ամէն:

Հայր մեր որ յերկինսդ:

3. էջ 506. Յիսուս Քրիստոս... ողորմեա... երկու եղբարցս աւետարանիս ստացողի՝ Գրիգորի եւ մեղաւոր զծողիս սորա Մկրտիչի. զբեցաւ թվ. ՌՁԸ:

Ձեռագրիս մասին հմմտ. Macler: REA 7 (1927), 108—112:

4.

ԹՈՒՂԹՔ ՊԱԻՂՈՍԻ ԵՒ ՅԱՅՏԵՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Cod. arm. 55. — ՌԺԲ = 1563:

ԹՈՒՂԹՔ՝ 333: — ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 16 X 11 սմ.: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԿԱԶՄ՝ կաշեպատ, խորաքանդակ զարդերով: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԿԻՍԱՆՈՐԱՆ՝ էջ 1, պարզ: — ՏԵՂԻ՝ Լվով: — ԳՐԻԶ՝ Թումա երեց: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1563:

Մատենան է Թուղթք Պաւղոսի Եւ Յայտնութիւն Յովհաննու:

1. էջ 1—552. Թուղթք Պաւղոսի Ա.—ԺԴ: Կից՝ Եւթաղեայ «Գրեցի եւ կարգեցի» եւ Թուղթքութիւնն եւ Նաւարկութիւնն:

2. էջ 554—662. Յայտնութիւն Յովհաննու:

3. էջ 662. Եւսերի հայրապետի ժամանակագրի յեկեղեցոյ պատմութենէն վկայութիւն վասն Տեսլանն Յովհաննու: Իսկ զի՞նչ ասացուք վասն Յովհաննու...:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. էջ 663: Փառք... Արդ զբեցաւ աստուածահաճոյ տառս սուրբ առաքելոյն Պաւղոսի որ է փոզն Տարսնի, եւ ընդ նմին տեսիլ սրբոյն Յովհան(ն)ու յաւետարանչի որ ի Պատմոս կղզոյն: Ի թվիս Հայոց ՌԺԲ եւ փետրվար ամսոյ ԻԸ: Ի քաղաքն Իլով. ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին ննջման: Ի ժամանակս աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորին Աւգոստոսի: Եւ հայրապետութեան տեսան տէր Սղեփանոսի կաթողիկոսի Արքեպեպոս. եւ ի մերումս նահանկի տէր Գրիգոր արհիպիսկոպոսին Վանեցոյ: Ձեռամբ մեռաւոր եւ անարժան թուճան իրիցուս, որ ոչ եմ արժանի կոչել պաշտաւեալ այսմ շնորհի. որ անուամբս միայն եմ կոչեցեալ, բայց զործովս հետի եմ ի ճշմարտութենէ:

Ով սուրբ ընդերձողք, ազաչեմ զձեզ, յորժամ ընթերնուք կամ աւրինակէք եւ ազատիք ի սմանէ յիշեցէք ի մաքրափայլ ազաթս ձեր զիս անարժանս եւ զծնողս իմ մի տէր ողորմեցիլ եւ զուր յիշեալ լիջիք ի Քրիստոս Աստուծոյ մերոյ:

2. էջ 666. Ես Յակոբ էրէցս Չամոսցային ստացա զսա ի թվին ՌԺԲ:

Ձեռագրիս մասին հմմտ. Macler: REA 7 (1927), 128—129:

5.

ՃԱՇՈՑ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԼԵՀԱՀԱՅՈՑ

Cod. arm. 68. — ՌՃԽԵ = 1698:

ԹՈՒՂԹՔ՝ 111: — ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 29 X 17,5 սմ.: — ՆԻԻԹ՝ անողորմ բուրբ: — ԳԻՐ՝ նար: — ԳՐՁՈՒԹԻՒՆ՝ միասիւն եւ երկսիւն: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ էջ 29—34, 44, 85—90, 191—194, 209—222: — ԿԻՍԱՆՈՐԱՆ՝ եռագոյն, էջ 1, 91, 98, 117, 123, 133: — ԼՈՒՍԱՆՅԱՉԱՐԿՔ եւ ԾԱՂԿԱԳԻՐՔ՝ կան: — ԽՈՐԱՆՆԵՐ եւ ՍԿՁԻՆԱՏԱՌՔ՝ կարմրագիր: — ՏԵՂԻ՝ Լեմբերգ: — ԳՐԻԶ փոքր մասին՝ Սահակ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1698:

Մատենան է ձաշոց եւ Պատարագամտոյց Լեհահայոց, հետեւեալ բովանդակութեամբ.

1. էջ 1—26. ձաշոց, ընթերցուածք Ծննդեան տօնէն մինչեւ Աւագ շաբաթ. կից՝ Աւետման ընթերցուածք:

2. էջ 26. Յորժամ կամեցի քահանայ պատարագ մատուցանել, պարս է խորհրդարար զգետաւորիլ. զպիւրքն երգեն ընդ քահանային Սղմ. Յիշեա, Տէր, զԴաւիթ...: Կից՝ (Աղօթք) ննջեցեալոց. Սուրբ Երրորդութիւն ընկալ զպատարագս...:

3. էջ 27—28. Աղօթք վասն ննջեցելոց աւանձնակի: Վասն վախճանելոյ հայրապետի աղօթք...: Այսպէս այլ եւ այլ փոքր աղօթքներ մատուցանելի ի պատարագին:

4. էջ 35—43 (նորաչղապիր). Առ պատարագն պատրաստութիւն առ պատարագն: Սղմ. ՃԼԱ. Քահանայք քո զղեցցին...: Որ զղեցեալ ես լոյս...: — Առ պատարագն Գրիգոր ԺԳ. Փափն շնորհեաց զներողութիւնս 50 ամաց իւրաքանչիւրում ասացողի զհետեւեալ աղօթս. Ես կամ իմ հոգակիլ զպատարագն...: — Առաղբութիւն Պատարագի վասն ննջեցելոց: Յիշեալ, Տէր, զհոգիս ծնողաց...: — Առաղբութիւն յոյժ օգտակար վասն ամենայն հարկաւորութեանց առանձնականաց եւ հրապարականաց. Ով Հայր ողորմութեանց...: — Աղօթք զկնի Պատարագին. Ձերից մանկանցն երգեցուք զօրհնութիւն...: Կից՝ Աղօթեցուք. Աստուած որ երկից մանկանցն մեղկացուցի զրոցս...: — Աղօթք Լէճնի փափին... Սրբազնայրոց եւ անբաժանելի երրորդութեանն...: Կից՝ Աղօթք. Ով ամենազթած զոհանամ զբէն...:

5. էջ 42—43. Աղօթք զգետաւորութեան:

6. էջ 45—84. Կարգ պատարագի: Քանանյն պատրաստեալ սպասաւորքն հանդերձ, գայ առաջի սուրբ սեղանոյն, եւ զպատշաճաւոր խոնարհութիւն նմա արարեալ, խաչակնքէ զինքն եւ յտակ ձայնիւ ասէ. Յանուն Հօր... Մտից առաջի սեղանոյ...: Փառք Հօր...: Սոստովանիմ...: Ընկալ, Տէր...: Սուրբ խորանաւս աղաչեցուք...: Ի յարկի սրբութեան...: Եւ ի բաց եղեալ զքոյ սկզոյն ասէ զՍղմ. Ինձ մերձեալ առ Աստուած բարի է... եւ այլն:

- 7. էջ 48—58. Ժամամուտք:
- 8. էջ 91—187 (նոտր, Ա. մասին գրով). Ճաշոց՝ սկսեալ Ձատկէն, կերակիրներու համար:
- 9. էջ 188—190 (այլ գրով). Ճաշու սրբոյն Գանդանոսի. Սղմ. Բերան արդարոյ...:
- 10. էջ 195—205 (մեծ նոտրագիր). Կանոն ջուր օրհնելոյ ի տօնի Աստուածայայտնութեան:
- 11. էջ 206 (188 էջի գրով). Ձեւ արձակման հայկական եւ լատինական:
- 12. էջ 207—208 (չղագիր եւ նոտրագիր). Յուցակ ճաշոցի:

ՅԻՇՍԱՍԿԱՐԱՆ. 1. էջ 188. Ստորին լուսանցքի վրայ. Թվին ՌձՄԷ (1698) սեպտեմբերի ԺԴ: Գրեցաւ ձեռամբ Սահակին, Նիկոլի:

2. էջ 206. Թվին ՌձՄԷ. յունիսի Ժ:
Ձեռագրի մասին հմտ. Macler: REA 7 (1927), 125—126:

6.

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ԵՒ ՃԱՇՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ

Cod. arm. 67. — ՌձՁԳ = 1734:

ԹՈՒՂԹՔ՝ 173: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 30,8 X 18,3 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԳԻՐ՝ շղագիր: — ԿԱՁՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԽՈՐԱԳԻՐՔ ԵՒ ՍԿՁԲՆԱԳԻՐՔ՝ կարմրագիր: — ԴԱՏԱՐԿ՝ 26 էջ: — ՏԵՂԻ՝ Լեռալիս: — ԳՐԻԶ՝ Յովհ. Ակուշաբեանց: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1734:

Մատենա է «Պատարագատոյց կամ խորհրդատե(ա)րն ըստ ծիսին եւ արարողութեանն եկեղեցւոյ Հայոց. գրեցեալ յամի ներմարմնութեան Տեառն 1734. այսինքն խորհրդատեար եւ ընթերցուածք պատարագի: էջ 60—103 կարգ պատարագի: էջ 315—320 այլ գրչէ «ի տօնի սրբուհի Աստուածածնոյ ճրեչտակաց, այսինքն Փորձիծնքուլայ» եւն:

ՅԻՇՍԱՍԿԱՐԱՆ. էջ 313. Ի փառս ամենասուրբ Երրորդութեան Հօր եւ Որդւոյ եւ Ոգւոյն սրբոյ գրեցեալ է այս խորհուրդատոյց, ձեռք Յոհաննու Ակուշաբեանց արհեստագործի Լէ(հա)հայոց եւ այլ. ի Լէօպօլիս յամի Տեառն 1734, օգոստ. 18:

Ձեռագրի մասին հմտ. Macler: REA 7 (1927), 113:

7.

ՃԱՇՈՑ

Cod. arm. 69. — ՌձԷ = 1658:

ԹՈՒՂԹՔ՝ 450: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 28,2 X 17,5 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԳԻՐ՝ բարգիր: — ԿԱՁՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԿԻՍԱՆՈՐԱՆ՝ էջ 1, գումար: — ԾԱՂԱԳԻՐՆԵՐ՝ կամ: — ՏԵՂԻ՝ անծանօթ: — ԳՐԻԶ՝ Մելգոն Արեւի որդի: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1658:

Մատենա է ճաշոց եւ Պատարագատոյց: էջ 318—377 խորհրդատեար, կից ժամամուտներ:

ՅԻՇՍԱՍԿԱՐԱՆ. էջ 376. Գրեաց թվ. Հայոց ՌձԷ (1658). Մելգոն Արեւի որդի: Հմտ. Macler: REA 7 (1927), 134—138:

8.

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Cod. arm. 53. — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 45: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,3 X 15 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԳԻՐ՝ բարգիր-շղագիր: — ԿԱՁՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ 61—62, 82—90: — ԽՈՐԱԳԻՐՔ ԵՒ ՍԿՁԲՆԱԳԻՐՔ՝ կարմրագիր: — ՏԵՂԻ՝ անծանօթ: — ԳՐԻԶ՝ անծանօթ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԸ. դար:

Մատենա է՝ խորհրդատեար, հետեւեալ բովանդակութեամբ.

էջ 1—14. Պատրաստութիւն (ըստ վարդան Յունանեանի):

էջ 15—60. Կարգ պատարագի:

էջ 63—75. Պատարագ զսրբուհւոյ Կ. Տ. Աստուածածնին եւ ճաշոցէ քաղուածք:

էջ 75—78. Երգ մեռելոց: Օրն այն յեւին օր բարկութեան...:

էջ 78—81. Ննջեցելոց աղօթքներ: Հմտ. Macler: REA 7 (1927), 114:

(Շարունակելի:)



Վոլին Բ. Քաղաքադիտութիւն. դասագիրք թեկնածուական կուսակցութեան համար: Երեւան 1934: 8⁰, էջ 216: Գինն՝ 2 ռ.:

Տարրական դպրոցների ծրագիր (Բ. բարեփոխուած հրատարակութիւն): Երեւան 1934: 8⁰, էջ 192: Գինն՝ 2 ռ.:

Տէմիրեան Կիւլեւեր., Հանգստեան ժամերգութիւն: Ի պէտս հասարակաց աղօթից: Հալէպ, Տպ. Արարա, 1933: 8⁰, էջ 48: Գինն՝ 2 Ֆր.:

Տէվէմեան Հրանտ, Աշխարհագրութիւն Հաստանի, պատմական Հայաստան, արդի Հայաստան եւ Կիլիկիա: Հալէպ, Տպ. Տէր Սահակեան, 1934: 8⁰, էջ 134: Գինն՝ 6 Ֆր.: Գիմել՝ Libr. Bogharian, Rue Salibé B. P. 285, Alep (Syrie).

— Աշխարհագրութիւն Սիւրիոյ եւ Լիբանանի. բնական քաղաքական եւ տնտեսական: Հալէպ, Տպ. Ա. Տէր Սահակեան, 1933: 8⁰, էջ 68: Գինն՝ 4 Ֆր.:

Տէր-Գրիգորեան Յովհ., Աստուածաշունչն Հայոց: Նրա թարգմանութեան 1500ամեայ յորեկանի առթիւ: Նոր Ջուղա, տպ. Ս. Ամենափրկչեան Վանքի, 1935: 8⁰, էջ 8:

Տիւմանեան Արամ Գ. (Հարգան), Հայրենի Արշալոյս: Պուէնոս Այրէս 1936: 8⁰, էջ 104: Գինն՝ 1 դոլլար:

Յուցմունքներ Երեւանի հականդային պաշտպանութեան պունկաի պետի: Երեւան 1934, էջ 18:

Գարուկեան Խ., Ի՞նչպէս կազմել կոլտնտեսութեան տարեկան արտադրական պլանը: Երեւան 1934: 8⁰, էջ 20:

Բէշեան Բ. Աշոտ, Երզնիական Ուրուագիծեր: Ա. շարք: Կ. Պոլիս 1935, 8⁰, էջ 178: Օտեան Երուանդ, Ընկեր Փանջուռի: Պարիս 1935: 8⁰, էջ 208: Գինն՝ 20 Ֆր.: [Նահատակ գրագէտ. բարեկ. մատենաչ. Թ. 9:]

Օրացոյց եւ դուշակ օդոց 1935. ՃՂԹ. տարի: Վեներիկ 1934: 12⁰, էջ 84:

Օրացոյց 1935 թուականին Գրիստոսի: Երուսաղէմ 1934: 12⁰, էջ 208: Գինն՝ 2 դ.:

Փալէյեվ Գ. Ի., Պէրիշկին Ա. Վ., Ֆիզիկայի դասընթացք. դասական միջնակարգ դպրոցների համար: Ա. մաս. Մեխանիկա եւ Ակուստիկա: Երեւան, Պետհրատ 1934: 8⁰, էջ 258: Գինն՝ 3 ռ.:

Փալէյեվ Գ. Ի., Պէրիշկին Ա. Վ., Ֆիզիկայի խնդիրների ժողովածու. միջնակարգ դպրոցների համար: Երեւան 1934: 8⁰, էջ 144: Գինն՝ 1.20 ռ.:

Փարսեան Կ. Ս., Այբուբենի ծագումն ու Արդիւնքը: Սելանիկ 1935: 8⁰, էջ 194: Գինն՝ 25 տրախմի:

Փիզիկոլոգիայի ծրագիր V—X դասարանների համար: Երեւան 1934: 8⁰, էջ 90: Գինն՝ 1.20 ռ.:

Փիրզուրի բանաստեղծի ծննդեան հազարամեակին նուիրուած Ժողովածու. կազմեցին Կ. Մելիք-Օհանջանեան, Պրոֆ. Մ. Արեղեան, Գ. Լեւոնեան, Ա. Շահնագարեան, Ռոստամ-Չալ: Երեւան 1934: 8⁰, էջ VII + 262. պատկերազարդ:

Փիրդուսի, Ռոստամ եւ Սոհրաբ. Վէպ Շահնամէից: Թրգմ. Գ. Ասատուր: Երեւան 1934: 8⁰, էջ 146. նկարազարդ:

Փիրդուսի, Ռոստամ եւ Սոհրաբ. Երգիծանք: Երեւան 1935: 8⁰, էջ 132: Գինն՝ 1.20 ռ.:

[Պետհր. էջան. գրադ. Թ. 63—64:]

1912 թ. ծնուածների զօրակոչն անցկացնել գերազանց նիւթեր ղեկուցողների համար: Երեւան 1934: 8⁰, էջ 72: Գինն՝ 50 կ.:

1934 թ. գիւղատնտեսական հարկի եւ գիւղի բնակչութեան ինքնահարկման օրէնքները: Երեւան 1934: 8⁰, էջ 60:

A b d a l i a n S., Prof., Le Zanguéour Sismique. Extrait du Bulletin du Laboratoire de Géographie physique de la Faculté des Sciences de l'Université de Paris. Paris 1936, p. 104, planches I—V.

A d o n t z N., Les Taronites en Arménie et à Byzance. Extr. Byzantion. Bruxelles 1935, p. 531—552.

— Les Taronites à Byzance, IV. Byzantion 1936, p. 21—42.

— Sur la date de l'histoire de l'Arménie de Moïse de Choren. Extr. Byzantion 1936, p. 97—100.

— La portée historique de l'oraison funèbre de Basile I. par son fils Léon VI. le Sage, p. 501—513.

— L'âge et l'origine de l'empereur Basile I. (867—886), p. 475—500.

— Les légendes de Maurice et de Constantin V., empereurs de Byzance, pp. 1—12, 224—260.

— Notes arméno-byzantines, p. 367—382. Extr. de Byzantion, t. VIII—IX.

Delaporte Louis, Textes hittites en transcription, textes hittites en écriture cunéiforme et vocabulaire, t. III. Paris 1933, 8⁰, p. 100. [Ed. Adrien-Maisonneuve.]

